Կազմված է «26» 07 2021թ.
Բաղկացած է 25 թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ջրառ» փակ բաժնետիրական
Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի
«26» 07 2021թ.

N 03 որոշմամբ

Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների
նախարար _____ Ս.Պապիկյան

Տպագրված է ընդամենը 2 օրինակից
Օրինակ 2

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի կողմից
17.05.2006թ.
Գրանցման համար 222.120.00617
ՀՎՀՀ 00093621

17.05.2006թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված
է Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից 06.08.2021թ.

«ՋՐԱՌ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրությամբ)

2021

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

Ընկերությունը ստեղծվել է ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 9-ի թիվ 164 որոշման համաձայն «Ոռոգում-Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցման թիվ՝ 286.140.000377 գրանցման օրը՝ 27 հոկտեմբերի 1994թ., վկայական 01 Ա 003206) առանձնացման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է դրա իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին համապատասխան:

Ընկերությունը հանդիսանում է «Որոտան-Արփա-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 17.05.2006թ., գրանցման թիվը 222.120.00619 վկայական N03Ա 071489, գտնվելու վայրը՝ Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, Ավագյան փող., թիվ 40) իրավահաջորդը փոխանցման ակտին համապատասխան:

Ընկերությունը ՀՀ Կառավարության 2012թ. նոյեմբերի 29-ի «Գույք հանձնելու և «ԴԵԲԵԴ-ԱՂՍՏԵՎ-ՋՐԱՌ» ու «ՍԵՎԱՆ-ՀՐԱԶԴԱՆՅԱՆ-ՋՐԱՌ» փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպելու մասին» թիվ 1512-Ա որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ «ԴԵԲԵԴ-ԱՂՍՏԵՎ-ՋՐԱՌ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 17.05.2006թ., պետական գրանցման համար՝ 222.120.00618, հարկ վճարողի հաշվառման համար՝ 07403997) նրան միացման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդ՝ փոխանցման ակտին համապատասխան:

ՀՀ Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 1207-Ա որոշման համաձայն «ԱԽՈՒՐՅԱՆ-ԱՐԱՔՍ-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը(գրանցման թիվ՝ 222.120.00616, գրանցման օրը՝ 17.05.2006թ., ՀՎՀՀ 04417934) վերակազմակերպվել է՝ Ընկերությանը միացման ձևով և հանդիսանում է «ԱԽՈՒՐՅԱՆ-ԱՐԱՔՍ-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

«Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է «Սևան-Հրազդանյան ջրառ» փակ բաժնետիրական ընկերության անվանահաջորդը (իրավահաջորդը):

1.2. Հիմնադիրի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մամինն է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

1.3. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրառման) պահից:

1.4. Բաժնետիրոջ (Լիազորված մարմնի) և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են օրենսգրքով, օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետությանը քաղաքացիական օրենսգրքով (այսուհետև՝ օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետև՝ օրենք), Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ: Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորող այլ նորմեր, քան բովանդակում է սույն կանոնադրությունը, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

1.6. Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, իր ֆիրմային անվամբ և ՀՀ զինանշանի պատկերով կլոր կնիք (հայերեն, ռուսերեն, անգլերեն գրառումներով), դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ:

1.7. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը

հայերեն կրճատ՝«Ջրառ» ՓԲԸ

ռուսերեն լրիվ՝ закрытое акционерное общество “Джрар”

ռուսերեն կրճատ՝ЗАО «Джрар»

անգլերեն լրիվ՝ ՝«Jrar» Closed Joint Stock Company

անգլերեն կրճատ՝ ՝«Jrar» CJSC

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ 0047, ք.Երևան, Վարդանանց փակուղի 8ա):

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. «Ջրառ» ՓԲԸ-ն շահույթ ստանալու նպատակ հետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, առանձնացված գույքով, ինքնուրույն հաշվեկշռով տնտեսվարող, լիցենզավորված կազմակերպություն է:

2.2. Ընկերության գործունեության հիմնական տեսակը իր տիրապետմանը և օգտագործմանը տրված ջրային համակարգերի պահպանումը և շահագործումն է, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով ջրօգտագործողներին ջրի մատակարարումը՝ պետական սեփականություն հանդիսացող ոչ մրցակցային ջրային համակարգերի կառավարման միջոցով, որպես ոչ մրցակցային ջրամատակարար, ՀՀ Կառավարության կողմից սահմանված կարգով ու պայմանագրային հիմունքներով Կարգավորող հանձնաժողովի սահմանված սակագներով, ոռոգման ծառայությունների

ոլորտում իրականացնում է բնակչության ու տնտեսության կարիքների՝ ջրապահանջարկի ապահովման նորմավորված ջրամատակարարումը, Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

2.3. Գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում:

2.4. Ընկերության հիմնական խնդիրներն են.

ա) ապահովել հիմնադրի կողմից Ընկերության տիրապետմանը և օգտագործմանը տրված ՀՀ տարածքում տեղաբաշխված հանրապետական-ռազմավարական նշանակություն ունեցող ջրային համակարգերի համալիր կազմի մեջ մտնող բնական ջրաղբյուրներից ջուր ամբարող (կուտակող) ջրամբարների, ջրառ իրականացնող ջուրն ընդունող ջրատնտեսական օբյեկտների և դրանց հետ կապված ջրատնտեսական սարքերի ու սարքավորումների շահագործումն ու պահպանումը՝ գործող տեխնիկական նորմերի պահանջներին համապատասխան.

բ) պայմանագրային հիմունքներով ջրօգտագործողներին, կողմերի սպասարկման ոլորտի սահմանազատման կետերում՝ ջրտուքի դիտակետերում ջրի մատակարարումը:

2.5. Իր հիմնական նպատակների և խնդիրների իրականացման համար Ընկերությունը ՀՀ տարածքում տեղաբաշխված իր համապատասխան ստորաբաժանումների միջոցով կազմակերպում և իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) ջրային համակարգերի համալիր կազմի մեջ մտնող ջրատնտեսական օբյեկտների (ջրառի գլխամասային կառուցվածքներ, ջրամբարներ, մակերևութային ջրաղբյուրներից ջրառ իրականացնող պոմպակայաններ, կապտաժային կառուցվածքներ, կոլեկտորներ ջրային ռեսուրսների օգտագործմանն առնչվող հիդրոտեխնիկական կառուցվածքներ (այսուհետ՝ ՀՏԿ), թունելները, ջրհորները, ջրատար խողովակները, մաքրման կայանները, ջրընդունիչները, ջրհեռները, ջրատարներըև այլն) պահպանումն ու շահագործումը.

բ) հանրապետության և սահմանակից երկրների կողմից միջազգային կոնվեցիաներով, միջպետական համաձայնագրերով և պայմանագրերով անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործման պայմանների պահպանումը՝ մշտական գործող միջպետական հանձնաժողովների կազմում՝ իր լիազորությունների սահմաններում.

գ) անդրսահմանային միջպետական ջրային համակարգերի, ՀՀ սահմաններում գտնվող մասով, սահմանված գործընթացներով ու կարգերով դրանց շահագործումը, պահպանումը, ինչպես նաև անդրսահմանային ջրային ռեսուրսի հայկական կողմին պատկանող մասնաբաժնի ջրառման ապահովումը.

դ) լիազոր մարմինն է ներկայացնում անդրսահմանային ջրային համակարգի օգտագործման համատեղ մշտական գործող միջպետական հանձնաժողովների աշխատանքի մասին տեղեկատվությունները, կայացրած որոշումները, բարձրացված այն հարցերը, որոնք կանոնակարգված չեն միջպետական համաձայնագրերով կամ

առաջացած այն տարաձայնությունները, որոնք պահանջում են ՀՀ պատկան մարմինների համապատասխան լուծումներ, որոշումներ:

ե) կազմակերպում և իրականացնում է ջրի կուտակումը ջրամբարներում, կուտակված ջրերի բացթողումը և մակերևութային ջրաղբյուրներից ջրառի իրականացումը, մղումն ու տեղափոխումը մինչև սահմանազատման կետ (ջրտուքի դիտակետերում), մատակարարում այն ջրօգտագործողներին՝ սահմանված կարգի համաձայն.

զ) ջրառի, ջրտուքի կետերի և ջրաչափական կետերի կառուցումը, կահավորումը, անխափան աշխատանքը, ջրաչափական կետերի չափաբերման և ջրաչափության աշխատանքները.

է) ջրօգտագործողների, ոռոգման ջուր սպառողների կողմից (լիազորված մարմնի հետ համաձայնեցված սահմանված կարգով հաստատված) ներկայացված ջրօգտագործման պլանների հիման վրա կազմում է ըստ ջրառման աղբյուրների ու ոռոգման համակարգերի օբյեկտների տվյալ ոռոգման շրջանի ջրառի և ջրի մատակարարման ամփոփ պլանները և ներկայացնում համապատասխան լիազորված կառավարման մարմնի հաստատմանը: Կազմակերպում և իրականացնում է հաստատված պլան-ժամանակացույցով ջրառի և ջրտուքի իրականացման գործընթացը.

ը) հաստատված ջրօգտագործման պլան-ժամանակացույցի համաձայն կնքում է պայմանագրեր ջրօգտագործողների, ջուր սպառողների հետ, ապահովում դրանց իրականացումը.

թ) սահմանված կարգի համաձայն վարում է ջրառի, մատակարարված ջրի ծավալի հաշվառում, կազմում հաշվետվություններ և ներկայացնում վերադասին՝ հիմնադրին, համապատասխան պատկան մարմիններին(ՋՌԿԳ, և այլն).

ժ) սահմանված կարգի համաձայն կազմակերպում է Ընկերության օգտագործմանը տրված ջրատնտեսական օբյեկտների սանիտարական բնապահպանական և անօտարելի գոտիների տնօրինումը, օգտագործումն ու պահպանումը.

ժա) հաշվարկում է ոռոգման ջրի մղման համար պահանջվող էլեկտրաէներգիայի չափաքանակներն ու իրականացնում է հսկողություն դրա արդյունավետ օգտագործման նկատմամբ.

ժբ) մշակում ու սահմանված կարգով հաստատման է ներկայացնում ջրային համակարգերի՝ տվյալ տարվա շահագործման ծախսերն ու ծախսածածկումն ապահովող, մատակարարվող մեկ խ/մ ջրի արժեքը.

ժգ) սահմանված կարգով իրականացնում է ֆինանսական հոսքերի կարգավորումն Ընկերության համակարգում.

ժդ) ջրառի օբյեկտներին միանալու համար իր իրավասության սահմաններում տալիս է տեխնիկական պայմաններ.

ժե) մշակում և սահմանված կարգով հաստատման է ներկայացնում համակարգի ընթացիկ և միջնաժամկետ զարգացման ծրագրերն ու հատկացված ֆինանսական միջոցների սահմաններում ապահովում դրանց իրականացումը.

Ժգ) իր իրավասության սահմաններում հանդես է գալիս նոր կառուցվող, վերանորոգվող, վերակառուցվող ջրատնտեսական օբյեկտների պատվիրատու և ապահովում դրանց նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննությունը.

Ժզ) իր իրավասության սահմաններում ոռոգման ջրի մատակարարման, օգտագործման, հաշվառման և հաշվետվության, ջրային համակարգերից օգտվելու և կառուցվածքների շահագործման կանոնների դրույթների խախտման դեպքում պատրաստում է համապատասխան նյութեր՝ խախտողներին սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար.

Ժե) սահմանված կարգով կազմակերպում է իր գործունեությանը վերաբերող հաշվապահական, վիճակագրական և օպերատիվ հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը.

Ժը) իրականացնում է համակարգված աշխատանք՝ պայմանագրային հիմունքներով մատակարարված ոռոգման ջրերի վարձերի սահմանված կարգով վճարման ուղղությամբ.

Ժթ) Ընկերության տիրապետման և օգտագործման համակարգերի պահպանության ու շահագործման ծախսերը կատարում է ստացված շահույթի և ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով ստացված ֆինանսավորման հաշվին.

Ժզ) իր իրավասության սահմաններում տալիս է կարծիք, եզրակացություն ջրօգտագործման թույլտվությունների ձևակերպման համար.

Ժէ) կազմակերպում և իրականացնում է գետերի վարարման, հորդացման շրջանում, ջրամբարներում վարարման ջրերի կուտակման, ջրային համակարգերով, ՀՏԿ-ներով հեղեղումների անվնաս անցկացումն ապահովող միջոցառումները.

ի) ջրային համակարգերի նորոգումների հաստատված ծրագրին համապատասխան իրականացնում է գարնան նախապատրաստական և տարեկան նորոգման աշխատանքներ՝ հաստատված թերությունների տեղեկարգերի ծավալների սահմաններում. նորոգման աշխատանքների կատարման և ընդունման գործող կարգին համապատասխան.

իա) կազմակերպում և իրականացնում է ջրային համակարգերի, ջրամբարների, պոմպակայանների, ՀՏԿ-ների աշխատանքային ռեժիմների ծրագրավորում (պլանավորում) և ապահովում դրանց իրականացումը՝ գործող տեխնիկական նորմերին համապատասխան.

իբ) ապահովում է ոռոգման համակարգերի, ջրամբարների, պոմպակայանների, ՀՏԿ-ների շահագործումն իրականացնող անձնակազմի արտադրական ուսուցումը, սեփական ուժերով կամ համապատասխան ծառայության գնմամբ՝ կազմակերպում է պահանջված մասնագիտական ուսուցում, մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացներ: ԲՈՒՀ-երի հետ համագործակցում է ուսանողների արտադրական և նախադիպլոմային պրակտիկայի անցկացման ու նոր մասնագետներ՝ արտադրության մեջ ներգրավելու ուղղությամբ.

իգ) ապահովում է իր կողմից շահագործվող օբյեկտներում աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի ու հակահրդեհային անվտանգության կանոնները.

իդ) իրականացնում է աշխատողների ուսումնա-մարզային վարժանքներ, հնարավոր արտակարգ իրավիճակներում ճիշտ գործելակերպի, աշխատանքի պաշտպանության, իմացության ստուգումն ու գործող կարգերին համապատասխան տվյալ աշխատանքի կատարման թույլտվությունների ձևակերպումը անվտանգության տեխնիկայի. հակահրդեհային ու անվտանգության կանոնների իմացության ու արտակարգ իրավիճակներում ճիշտ գործելու կարգի կիրառման համար:

2.6. որպես Լիազոր մարմնի կողմից պատվիրակված լիազորություն իրականացնում է նաև՝ Ջրային համակարգի(ոռոգման համակարգերի և մելորացիայի մասով)ոլորտի՝ արխիվ-կադաստրի վարման գործառույթները, ներառյալ համակարգում քաղաքացու աշխատանքի փաստը վավերացնող(աշխատանքային ստաժ, աշխատավարձի չափ և այն) սահմանված ձևի ու բովանդակության, ՀՀ ում և արտերկրում կենսաթոշակի հաշվարկման հիմք հանդիսացող տեղեկանքների տրամադրումը

ա) տարբեր աստիճանի գաղտնիության (պետական և ծառայողական) փաստաթղթերի հետ տարվող աշխատանքների, գործառույթների, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքների մուտքի թույլտվությունների ստացման, տրամադրման գործընթացների վարում, իրականացում.

2.7. Պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման անվտանգ օգտագործման ապահովման նպատակով՝

ա) մշակում և հիմնադրի հաստատմանն է ներկայացնում ջրային համակարգի ՀՏԿ-ների. հիդրոմեխանիկական ու էլեկտրատեխնիկական կայանքների, սարք-սարքավորումների հիմնանորոգման, վերակառուցման արդիականացման առաջարկություններ, տեխնիկական առաջադրանքներ, ծրագրեր.

բ) քննարկում և կարծիք է հայտնում իր կողմից շահագործվող համակարգերում ներդրումային ծրագրերի մշակումներին, նախագծերին, տալիս է եզրակացություն, ներկայացնում առաջարկություններ, կարծիք.

գ) մշակում, քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում ջրային համակարգերում հնարավոր ռիսկերը, ու արտակարգ իրավիճակների առաջացման հնարավորությունները, նվազագույնի հասցնելու կամ վթարավտանգ վիճակները վերացնելու միջոցառումները.

դ) գործող կարգին և սահմանված գործընթացներով ապահովում է ՀՏԿ-ների տեխնիկական վիճակ, զննման հետազոտությունների ՀՏԿ-ների անվտանգության հայտարարագրերի կազմման դրանց փորձաքննության իրականացումն ու գրանցումը.

ե) ՀՏԿ-ների վթարի վտանգի դեպքում սահմանված կարգով իրազեկում է հիմնադրին ու պատկան մարմիններին.

զ) վթարի դեպքում իրականացնում է արտակարգ իրավիճակների պլանով նախատեսված իր մասով գործողությունները.

2.8. Մշակում փոխհամաձայնեցնում ու հիմնադրի հաստատմանն է ներկայացնում քաղաքացիական պաշտպանության, խաղաղ և պատերազմանական շրջանների գործողությունների պլանները, պարբերաբար թարմացնում դրանք և ապահովում դրանց իրականացումը.

2.9. Զինապարտության մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան վարում է զինապարտների հաշվառման, զորակոչային պլանների մշակման ու պարբերաբար թարմացման գործընթացներն ու իրականացնում փոխգործակցությունը ՀՀ զինկոմիսարիատի համապատասխան ստորաբաժանումների հետ:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. «Ջրառ» ՓԲԸ-ն առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է: Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3.2. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բանկային հաշիվներ բացել ՀՀ և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով:

3.3. Ընկերությունն իր պարտավորություններով պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Ընկերությունը պատասխանատու չէ Հիմնադիրի պարտավորությունների համար:

Հիմնադիրը պատասխանատու չէ Ընկերության պարտավորությունների համար և իրեն պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում է Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

3.4. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պարտավորություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների հանար:

3.5. Ընկերությունն իրավունք ունի.

ա) ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր. տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը.

բ) ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով, հիմնադրի համաձայնությամբ.

գ) օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր.

դ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ.

ե) օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տարածել իր գործունեության և կատարած աշխատանքների մասին.

զ) ունենալ միջոցներ արտարժույթով, դրանք ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք և ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել և ինքնուրույն տնօրինել, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վաճառել պետությանը, կազմակերպություններին կամ քաղաքացիներին,

է) ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը սպառողներին, եթե օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված.

ը) ստեղծել մասնաճյուղեր և բացել ներկայացուցչություններ՝ օրենքի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան.

ը) հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ ընկերություններ և մասնակցել դրանցում.

թ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օտարել Ընկերության գույքը.

ժ) օգտվել ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից.

ժա) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ կնքել Ընկերությանը պատկանող գույքի վարձակալության, անհատույց օգտագործման, ինչպես նաև համակարգերից օգտվելու կամ համակարգերին միանալու պայմանագրեր՝ գործընթացները կարգավորող սահմանված կարգերին համապատասխան:

3.6 Ընկերությունը պարտավոր է.

ա) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական և վիճակագրական հաշվետվություն.

բ) օրենքով սահմանված կարգով և դեպքերում հայտարարել իր սնանկացման մասին.

գ) ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, հիմնադիր որոշումների, օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1. Ընկերության գույքը կազմում են՝

ա) բաժնետիրոջ դրամական և այլ գույքային ներդրումները,

բ) բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ու վարկատուների վարկերը,

գ) ՀՀ օրենսդրությամբ չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրը:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

5.1. Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը և կազմված է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

5.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է **36,998,322,168.3** (երեսունվեց միլիարդ ինը հարյուր իննսունութ միլիոն երեք հարյուր քսաներկու հազարհարյուր վաթսունութ ամբողջ երեք տասնորդական) ՀՀ դրամ, որը կազմում է **4,551,231** (չորս միլիոն հինգ հարյուր հիսունմեկ հազարերկու հարյուր երեսունմեկ) հատ հասարակ (սովորական) բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է **8,129.3** (ութ հազար հարյուր քսանինը ամբողջ երեք տասնորդական) ՀՀ դրամ:

5.3. Ընկերության կողմից թողարկված բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, լրիվ վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ կառավարության կամ նրա լիազորած մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են:

5.4. Ընկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոխել բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետև՝ ժողով) որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց և օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցման պահից:

5.5. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը.

Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է ավելացվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելով կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ իրացված և վճարված են:

Ընկերությունն իր ամենամյա գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման ճանապարհով ավելացնել կանոնադրական կապիտալը՝

- շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ,
- կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային և անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող գույքը (զուտ ակտիվները) կամ դրա մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ:

Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով ընկերությունը չի կարող ավելացնել կանոնադրական կապիտալն ավելի, քան ժողովի հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

5.6. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը.

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է կատարվել բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ կամ բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ, այդ թվում՝ օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ: Ընկերությունը իրավունք չունի նվազեցնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով նրա չափը կդառնա ավելի փոքր օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված Ընկերության նվազագույն կանոնադրական կապիտալից:

5.7. Ընկերության կանոնադրական կապիտալը թույլատրվում է նվազեցնել Օրենքով սահմանված կարգով բոլոր պարտատերերին տեղեկացնելուց հետո: Այդ դեպքում Ընկերության պարտատերերը իրավունք ունեն պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, վաղաժամկետ կատարում կամ դադարեցում, ինչպես նաև վնասների հատուցում:

6. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ

6.1. Ընկերությունը կարող է տեղաբաշխել բաժնետոմսեր, պարտատոմսեր, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ արժեթղթեր:

6.2. Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել միայն հասարակ (սովորական) բաժնետոմսեր: Ընկերության բոլոր բաժնետոմսերը անվանական են:

Ընկերության կողմից թողարկված հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

6.3. Ընկերության ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել փաստաթղթային (տպագրական եղանակով տպագրված) կամ ոչ փաստաթղթային ձևի անվանական բաժնետոմսեր և պարտատոմսեր: Ընդ որում բաժնետոմսերի թողարկման փաստաթղթային ձևը բաժնետոմսերի հավաստագիրն է:

6.4. Բաժնետերերի կողմից բաժնետոմսերի արժեքը վճարելուց և Ընկերության պետական գրանցումից հետո Ընկերությունը բաժնետերերի բաժնետոմսերը պետք է գրանցի օրենքով սահմանված կարգով: Բաժնետոմսերի հավաստագիրը (սերտիֆիկատը) անվանական արժեթուղթ է, որը հավաստում է նրա սեփականատիրոջ կողմից տվյալ Ընկերության որոշակի տեսակի և քանակի բաժնետոմսերի սեփականության իրավունքը:

Հասարակ (սովորական) բաժնետոմսերի համար բաժնետերերին տրվում են հավաստագրեր: Դրանք տրվում են լրիվ վճարված բաժնետոմսերի համար:

Հավաստագիրը տալու, այն փոխարինելու և չեղյալ ճանաչելու կարգը սահմանվում է օրենքով և այլ իրավական ակտերով:

Հավաստագիրը պետք է համապատասխանի ՀՀ իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանվածության պահանջներին:

6.5. Բաժնետոմսը անբաժանելի է: Եթե երկու և ավելի անձինք մեկ բաժնետոմսի սեփականատեր են ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:

6.6. Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ քան դրանց տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում:

Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է իրականացվել դրամով, արժեթղթերով, այլ գույքով կամ գույքային իրավունքներով, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներով:

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռք բերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով:

Ընկերության հիմնադրման ժամանակ բաժնետոմսերի դիմաց հիմնադիրների կողմից գույքի դրամական գնահատականը սահմանվում է հիմնադիրների միջև համաձայնեցված, իսկ բաժնետոմսերի և այլ արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխման դեպքում օրենքով սահմանված կարգով և ենթակա է անկախ փորձագիտական վերստուգման (աուդիտի):

Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը (չվճարված կամ հետ վերադարձված) չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Այդ բաժնետոմսերը պետք է իրացվեն Ընկերության կողմից՝ դրանք Ընկերությանը փոխանցելու պահից մեկ տարվա ժամկետում: Հակառակ դեպքում՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է որոշում ընդունի նշված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխման մասին:

6.7. Ընկերությունն իրավունք ունի պարտատոմսեր թողարկել կանոնադրական կապիտալի չափը չգերազանցող գումարով:

6.8. Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ:

Ընկերության շահույթից մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

Եթե պահուստային հիմնադրամը կազմում է Ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթի 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային հիմնադրամը օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և Ընկերության բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները այդ նպատակին չեն բավարարում:

Պահուստային կապիտալը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար (բացի օրենքով սահմանված դեպքերից):

6.9. Ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ հիմնադրամներ:

6.10. Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվետվության տվյալներով՝ ՀՀ իրավական ակտերով սահմանված կարգով:

Եթե Ընկերության հաշվետու ֆինանսական տարվա ավարտից սկսած Ընկերության ժողովի հաստատմանը ներկայացված ընկերության տարեկան հաշվապահական հաշվեկշռից կամ ընկերության աուդիտորական ստուգման

արդյունքներից պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքն Ընկերության կանոնադրական կապիտալից փոքր է, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել իր կանոնադրական կապիտալի չափի նվազեցման մասին, պայմանով, որ կանոնադրական կապիտալի մեծությունն Ընկերության զուտ ակտիվների արժեքից ավելի չլինի:

Եթե Ընկերության հաշվետու ֆինանսական տարվա ավարտից սկսած Ընկերության բաժնետերերի ժողովի հաստատմանը ներկայացված ընկերության տարեկան հաշվապահական հաշվեկշռից կամ ընկերության աուդիտորական ստուգման արդյունքներից պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքն օրենքով սահմանված Ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն մեծությունից փոքր է, ապա Ընկերությունը պարտավոր է որոշում ընդունել իր լուծարման մասին:

Եթե սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոքրացման կամ Ընկերության լուծարման մասին որոշում չի ընդունվել, ապա Ընկերության Հիմնադիրը, պարտատերերը, ինչպես նաև պետության կողմից լիազորված մարմիններն իրավունք ունեն պահանջել ընկերության լուծարումը դատական կարգով:

7. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը իրավունք ունի՝

ա) մասնակցել Ընկերության կառավարմանը.

բ) ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.

գ) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (գաղտնի փաստաթղթերից բացի), այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, հաշվապահական գրքերին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը.

դ) ընկերության ընդհանուր ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի (անձանց).

ե) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով այլ բան չի նախատեսվում.

զ) Ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով.

է) դիմել դատարան ժողովի կողմից ընդունված ու գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով .

ը) Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը.

թ) Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում, անվճար ստանալ համապատասխան քանակությամբ հասարակ (սովորական) բաժնետոմսեր,

ժ) օգտվել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից

7.2. Հիմնադիրը (բաժնետերը) պարտավոր է.

ա) մասնակցել Ընկերության Ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով կատարել դրամական և գույքային ներդրումներ.

գ) չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկություններ.

7.3. Բաժնետերն իր իրավունքներն իրականացնում է Լիազորված մարմնի միջոցով, բացի օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերի:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Ընկերությունն իրավունք ունի հայտարարել (որոշում ընդունել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային և (կամ) տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից):

Ինչպես տարեկան, այնպես էլ եռամսյակային, կիսամյակային շահութաբաժինների վճարման, շահութաբաժինի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետիրոջ ընդհանուր ժողովի կողմից:

Շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

8.2. Ընկերությունն իրավունք չունի հայտարարել որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերի շահութաբաժիններ վճարման մասին, եթե՝

ա) լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը.

բ) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սննկացման) հայտանիշներին, կամ նշված հայտանիշները ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.

գ) Ընկերության զուտ ակտիվների արժեքը փոքր է Ընկերության կանոնադրական կապիտալից և կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

9. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Ընկերությունն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն:

Ընկերության տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններ ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և կանոնադրությանը համապատասխան:

9.2. Տարեկան ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, տարեկան հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության վերստուգողի եզրակացությամբ: Նշված փաստաթղթերը հրապարակելուց առաջ պետք է ստուգվեն և դրանց հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության և Ընկերության բաժնետերերի հետ ընդհանուր գույքային շահեր չունեցող աուդիտն իրականացնող անձի կողմից:

9.3. Ընկերության տարեկան հաշվետվությունը ենթակա է գործադիր մարմնի կողմից եզրակացություն տալուն՝ տարեկան ժողովի գումարման ամսաթվից առնվազն 30 օր առաջ:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

10.1. Ընկերության կառավարման մարմիններն են՝

ա) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, որը ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է.

Տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական ավարտից հետո 6 ամսվա ընթացքում:

Ընկերությունը պարտավոր է տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարման մասին իր բաժնետերերին օրենքով սահմանված կարգով ծանուցել ժողովի գումարման օրվանից առնվազն 5 օր առաջ:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունները և որոշումները ընդունելու կարգը սահմանվում են օրենքով:

բ) Ընկերության խորհուրդը, որի դեպքում օրենք 83-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ մասի համաձայն մինչև 50 բաժնետեր ունեցող Ընկերությունում խորհուրդ չստեղծվելու դեպքում, նրա իրավասություններն իրականացնում է ժողովը:

գ) Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ընկերության տնօրենը, որը գործում է օրենքով սահմանված կարգով իր իրավասությունների շրջանակներում, ինչպես նաև օրենքի 84-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված նույն հոդվածի 1-ին կետի «զ», «թ», «ժգ», «իբ-իդ» ենթակետերով

նախատեսված հարցերը, որոնք կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ փոխանցվել են Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

11.1 Ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով:

Առաջին տարեկան ժողովը գումարվում է առաջին ֆինանսական տարվա ավարտից հետո: Տարեկան ժողովը գումարվում է ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 6 ամսվա ընթացքում:

Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Ժողովի անցկացման տարին, ամսաթիվը, կարգը, օրակարգը, ինչպես նաև բաժնետերերի ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է Ընկերության խորհուրդը՝ օրենքով սահմանված կարգով:

11.2 Ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը.

գ) Ընկերության լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

ը) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման. ինչպես նաև Ընկերության կողմից ձեռքբերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

թ) Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա) նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ժ) Ընկերության վերստուգողի ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգողի ընտրության հարցերը

քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգողի ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգողի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

ժա) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժբ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի.

ժգ) Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժդ) ժողովի վարման կարգը.

ժե) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժզ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժէ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

ժը) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.

ժթ) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում.

ի) ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերումը և հետգնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.

իա) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի, կամ անդամի, տնօրենի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.

իբ) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը.

իգ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.

իդ) հոլդինգային ընկերությունների առևտրային կազմակերպությունների, այլ միությունների հիմնադրումը.

իե) հոլդինգային ընկերությունների առևտրային կազմակերպությունների, այլ միությունների մասնակցությունը.

իզ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

11.3 Կանոնադրության 11.2 կետով սահմանված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել խորհրդին կամ գործադիր մարմնին:

11.4 Ընկերության ժողովի իրավասություններն իրականացնում է Հիմնադիրը (բաժնետերը) կամ նրա կողմից լիազորված անձը (անձինք)՝ հիմնադրի կողմից սահմանված լիազորությունների շրջանակում:

11.5 Սույն կանոնադրության 11.2 կետի «ա» «բ» «գ» «դ» «ե» «զ» «ը» «ժը» «ժթ» ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունում են ձայների երեք քառորդով:

11.6 Ընկերության բաժնետերերի ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել Ընկերության տնօրենը, գլխավոր հաշվապահը, խորհրդի անդամները, ինչպես նաև վերստուգողները և աուդիտն իրականացնող անձը:

11.7 Ժողովներն անց են կացվում և որոշումներն ընդունվում են օրենքով սահմանված կարգով:

11.8 օրենքի 83-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ մասով նախատեսված դեպքում խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերը ենթակա են ժողովի իրավասությանը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին կետի «զ», «թ», «ժգ», «իբ-իդ» ենթակետերով նախատեսված հարցերի, որոնք կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ կարող են փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

12. 1 Օրենքի 83-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ մասով նախատեսված դեպքում խորհրդի Մինչև 50 բաժնետեր ունեցող Ընկերությունում խորհուրդ չստեղծվելու դեպքում. նրա իրավասություններն իրականացնում է ժողովը: Այդ դեպքում կանոնադրությունը պետք է դրույթներ պարունակի այն անձի կամ Ընկերության այն մարմնի մասին, որն իրավունք ունի որոշումներ ընդունել օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ մասի «բ-դ» ենթակետերով սահմանված հարցերի վերաբերյալ:

12.2 Օրենքի 84-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված օրենքի 83-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ մասով նախատեսված դեպքում խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերը ենթակա են ժողովի իրավասությանը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին կետի «զ», «թ», «ժգ», «իբ-իդ» ենթակետերով նախատեսված հարցերի, որոնք կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ կարող են փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

12.3 Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք սույն օրենքով և կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

12.4 Ընկերության խորհրդի կազմը և անդամների քանակը հաստատվում է ընկերության ժողովի կողմից:

12.5 Ընկերության խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի անդամների կազմից, ձայների պարզ մեծամասնությամբ:

12.6 Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.

բ) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.

գ) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

դ) նախագահում է ժողովներում:

12.7 Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

12.8 Ընկերության խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք համաձայն օրենքի՝ հանդիսանում են ընկերության բաժնետերերի ժողովի բացառիկ իրավասությունը:

12.9 Ընկերության խորհուրդի բացառիկ իրավասությանն են պատկանում.

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը

բ) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառապես օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի.

գ) ժողովների օրակարգի հաստատումը

դ) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ.

ե) սույն կանոնադրության 11-րդ կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.

զ) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.

է) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.

ը) օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

թ) Ընկերության վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

ժ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

ժա) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

ժբ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

ժգ) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժդ) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին այլ փաստաթղթերի հաստատումը.

ժդ) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը՝ Հիմնադրի համաձայնությամբ.

ժի) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

ժզ) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.

ժը) օրենքի 9-րդ գլխով նախատեսված գործարքների կնքումը.

ի) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

իա) Ընկերության վարչակազմակերպական հաստատումը.

իբ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը:

իգ) օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

12.10 Ժողովի որոշմամբ խորհրդի անդամների համար սահմանվում է պարգևավճար և/կամ փոխհատուցում նրանց այն ծախսերի դիմաց, որոնք կապված են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Պարգևավճարի և/կամ փոխհատուցման չափը և վճարման կարգը սահմանվում են ժողովի որոշմամբ:

12.11 Խորհրդի նիստերն անց են կացվում օրենքով սահմանված կարգով:

13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

13.1. Ընկերության գործադիր մարմինը Ընկերության տնօրենն է, որն իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը, բացառությամբ օրենքով և Ընկերության կանոնադրությամբ ժողովի և խորհրդի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի: Ընկերության տնօրենը կազմակերպում է ժողովի և խորհրդի որոշումների կատարումը: Ընկերության տնօրենը նշանակվում է պաշտոնի և ազատվում է պաշտոնից Ընկերության ժողովի որոշմամբ (Հիմնադրի հրամանով):

13.2. Ընկերության տնօրենը՝

ա) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.

բ) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

գ) գործում է առանց լիազորագրի.

դ) տալիս է լիազորագրեր.

ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

զ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

է) Հաստատում է Ընկերության ներքին կարգապահական կանոնները, Ընկերության հաստիքացուցակով սահմանված պաշտոնների անձնարգերը,

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.

ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

ժա) Հիմնադրի հանձնարարությամբ իրականացնում է օրենքին չհակասող այլ լիազորություններ

13.3. օրենքի 83-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ մասով նախատեսված դեպքում

ա) օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

բ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

գ) Ընկերության վարչակազմակերպական հաստատումը.

դ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը:

14. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ, ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

14.1. Բաժնետերերը, խորհրդի անդամները և Ընկերության տնօրենը իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և կատարեն Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ և ողջամիտ կերպով:

14.2. Բաժնետերերը, խորհրդի անդամները, Ընկերության տնօրենը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ անձինք Ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և պայմանագրերով սահմանված կարգով:

Ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են այն բաժնետերերը, խորհրդի անդամներն, որոնք Ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

Բաժնետերերի, խորհրդի անդամների կամ Ընկերության տնօրենի հրաժարականը, պաշտոնից հետ կանչելը կամ ազատելը չի ազատում Ընկերությանը պատճառած վնասի համար պատասխանատվությունից:

14.3. Անձը ազատվում է սույն հոդվածով սահմանված Ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ իր գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությունը կկրի վնասներ:

15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ

15.1. Ընկերության (բառը փոփոխված)ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ժողովն ընտրում է 3 անձից կազմված Ընկերության վերստուգող հանձնաժողով:

15.2. Վերստուգող հանձնաժողովը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը:

Վերստուգող հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է կանոնադրությամբ, ինչպես նաև ժողովի կողմից հաստատված ներքին փաստաթղթով՝ կանոնակարգով:

15.3. Վերստուգող հանձնաժողովն իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ժողովի որոշմամբ, ինչպես նաև Հիմնադրի պահանջով:

Վերստուգող հանձնաժողովն իրավունք ունի պահանջել արտահերթ ժողովի գումարում:

Վերստուգող հանձնաժողովի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա առանձնացված ստորաբաժանումների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

15.4. Վերստուգողը հաշվետու է ժողովին: Վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության և (կամ) ծախսերի փոխհատուցման չափերն ու պայմանները սահմանվում են ժողովի որոշմամբ: Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող է լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ

15.5. Վերստուգող հանձնաժողովի նախագահն ընտրվում է այդ հանձնաժողովի կազմից՝ հանձաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

15.6. Ընկերության բաժնետերերի ժողովի որոշմամբ վերստուգող հանձնաժողովի իրավասությունները կարող են դրվել վերստուգողի վրա:

16. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԸ

16.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը ներգրավում է աուդիտ իրականացնող անձի (կազմակերպություն կամ ֆիզիկական անձ), որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

16.2. Ընկերության աուդիտն իրականացնող անձին հաստատում է ժողովը: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է տնօրենը:

16.3. Ընկերության աուդիտն իրականացնող անձին ներկայացվող պահանջները սահմանվում են օրենքով, այլ իրավական ակտերով և նրա հետ կնքված պայմանագրով: Աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագիրը պետք է համաձայնեցվի բաժնետերերի հետ:

17. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ ԿԱՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

17.1. Վերստուգող հանձնաժողովը կամ Ընկերության աուդիտն իրականացնող անձն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ, որոնք պետք է պարունակեն՝

ա) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը.

բ) Ընկերության հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերլուծությունը.

գ) Ընկերության հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիության հաստատումը.

դ) Ընկերության կառավարման մարմինների որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվության գործող օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության հաստատումը.

ե) ստուգման առանձնահատկությունների հետ կապված այլ տեղեկատվություն:

17.2. Վերստուգողը Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ ներկայացնում է տարեկան ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգողի եզրակացությունը պարտադիր է:

18. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

18.1. Ընկերությունը պարտավոր է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում պահպանել՝

ա) Ընկերության պետական գրանցման վկայականը, կանոնադրությունը, կանոնադրության մեջ կատարված լրացումները և փոփոխությունները, կանոնադրությունը նոր խմբագրությամբ, Ընկերության հիմնադրման մասին որոշումը.

բ) Ընկերության հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Ընկերության գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերը.

գ) ժողովի և այլ կառավարման մարմինների հաստատած՝ Ընկերության ներքին փաստաթղթերը.

դ) Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները.

ե) Ընկերության տարեկան հաշվետվությունները.

զ) Ընկերության բաժնետոմսերի թողարկման ազդագրերը.

է) հաշվապահական հաշվառման փաստաթղթերը (հաշվապահական հաշվեկշիռները, շահույթի և վնասների հաշիվները, աուդիտորական եզրակացությունները և այլն).

ը) պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունները.

թ) ժողովների, վերստուգողի նիստերի արձանագրությունները.

ժ) հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները և քվեարկությունները.

ժա) Ընկերության վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, պետական ֆինանսական վերահսկում իրականացնող մարմինների եզրակացությունները.

ժբ) Ընկերության հետ փոխկապակցված անձանց ցուցակները.

ժգ) Ընկերության կնքած պայմանագրերը.

ժդ) Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ, ներքին փաստաթղթերով, ժողովի, խորհրդի և Ընկերության կառավարման այլ մարմինների որոշումներով նախատեսված այլ փաստաթղթերը:

18.2. Ընկերությունը սույն կանոնադրության 18.1. կետով նշված փաստաթղթերը պահպանում է իր գտնվելու վայրում:

18.3. Ընկերությունը պարտավոր է բաժնետիրոջ պահանջով 5-օրյա ժամկետում նրան տրամադրել 18.1 կետում նշված փաստաթղթերի պատճենները:

19. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

19.1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը տեղի է ունենում ժողովի որոշմամբ:

19.2. Մասնաճյուղի և (կամ) ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման հետ կապված տեղեկությունները մատցվում են Ընկերության կանոնադրության մեջ: Այդ տեղեկությունների փոփոխությունների հետ կապված կանոնադրության փոփոխություններն ուժի մեջ են մտնում պետական գրանցումն իրականացնող մարմիններին ծանուցելու պահից:

19.3. Ընկերության կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց պետական գրանցման պահից, իսկ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում՝ պետական գրանցումն իրականացնող մարմիններին ծանուցելու պահից:

20. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

20.1. Խորհուրդը որոշում է աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարի չափը:

Ընկերությունը բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել:

Եթե լուծարվող ընկերության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

Ընկերության վերակազմակերպման և լուծարման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման ու լուծարման կարգը սահմանվում են օրենսգրքով, օրենքով և այլ օրենքներով:

20.2. Ընկերության լուծարումը հանգեցնում է Ընկերության դադարմանը առանց Ընկերության իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցման:

Ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը կայացնում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների ոչ պակաս, քան 2/3-ով:

Կանոնադրական կապիտալի 10 %-ից ավելին ունեցող բաժնետերերը դատական կարգով կարող են պահանջել նշանակելու նոր լուծարման հանձնաժողով:

Լուծարման հանձնաժողով կազմելու պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման բոլոր լիազորությունները: Լուծարվող Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (այդ թվում՝ լուծարման հանձնաժողովի կազմը) ենթակա են գրանցման իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում:

20.3. Ընկերությունը, բացառությամբ այլ իրավաբանական անձի միացման ձևով վերակազմակերպման դեպքի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից:

Ընկերությունն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս, նրանք վերակազմակերպված են համարվում միացող Ընկերության գործունեությունը դադարելու վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից:

20.4. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից: